

ԵՍՏՆՈՐԻ ԿԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրիւմ են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարազգայնացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունուում են ամեն լեզուով

Յայտարարութիւնները կամար վճարում են
իւրաքանչիւր բառին 2-կոպէկ:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆՆԵՐԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

1879 թիւն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԸՄԵՆՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերէն:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՎԿԵՆ ՀԵՌԵՆԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՍԱՆ մէջ:

ԸՄԵՆՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

Թատրոն և լրագրութիւնը—Ներքին տեսութիւնը: Նամակ նոր-նամակներէն: Ներքին լրագրութիւնը—Արտաքին տեսութիւնը: Գերմանիա: Աւստրիա: Ֆրանսիա: Ֆրանսիա: Հայկի: Անգլիա: Նամակ թիւրքալեզուներէն: Մշակիչ հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական: Աղջկան և Գիւղիկար:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Լրագրի տարի սրանից առաջ Ռուսաստանի հայոց լրագրութիւնը իր օրհասականին էր հասած: Մեր լրագրութեան վերանորոգիչ յեղափոխական մտքերի ամենաբարձր կէտը, որին նա կարողացել է և յանդգնել է հասնել՝ մի կողմից բողոք էր հնացած գրաբա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՂԱՋԱՆ ԵՒ ԳԻՒԼԻԺԱՐ *

(Բայազէթի, զօրակի ազատութեան յիշատակին)

Այն ժամանակ երբ ամենայն տեղ պատրաստութիւն էր տեսնուում մեծ պատերազմի համար, 1877 թիւն թիւրքալեզու մտակ սահմանում, Բայազէթի փոքր ամրոցումը չէր նշարվում ոչինչ պատրաստութիւն պաշտպանութեան համար: Բայազէթ քաղաքը գտնվում է քառաձայրի ստորոտումը, որի վրա շինված է փոքր ամրոց: Բայազէթը գտնվելով միշտ մի և նոյն դրութեան մէջ, հայերի և թիւրքերի մէջ չէր նշարվում անբարեկամական յարաբերութիւններ: Բոլոր պատրաստութիւնները նշարվում էին միայն նրա զօրակի աննշան թուով շատանալուց: Շրջակայքում բնակվող քերդերը ձմեռ ժա-

րի դէմ, որի տեղ նա անգոր էր հիմնել մի հաստատ կենդանի, աշխարհաբար լեզու, իսկ միւս կողմից հայոց հասարակութեան մէջ ուսումնարաններ հիմնելու քարոզ էր, որ արտայայտվում էր հետևեալ դարգակ Փրօպէ մէջ՝ մեր ազգը կը փրկվի միայն ուսումնարաններով:

Երբ էր մեր լրագրութեան վերջին խօսքը, այդ էր նրա զարգացման ամենաբարձր կէտը որից յետոյ նա զգաց թէ էլ ոչինչ չունի ասելու ժողովրդին, ուրեմն պէտք է մեռնէր, իջնէր հասարակական ասպարիզից դէպի մութ գերեզման, յաւիտենաբար անհետանար, չը գտնելով նոր նիւթ-

մանակ պարտաւելով որսորդութեամբ, աղուէսի, կղնաբլի և գայլերի վրա, առաջվապէս այդ գազանների կաշիները տանում էին բայազէթից հայերի տուն և վաճառում էին և ուրախութեամբ հիւրասիրվում էին նրանցից լավաչներով և պանրով:

Ամենահարուստ բայազէթիցի հայ Զորքաբ Գալուստեանցը պարտաւում էր միշտ այդ կաշիների առնելով և ձմեռը 1876 թիւն զարդարել էր իր հարուստ տան պատերը հարիւրաւոր աղուէսների և կղնաբլիների կաշիներով և մտադիր էր 1877 թուականի զարուէսին վաճառել Նրանի վաճառականների վրա մեծ վաստակներով և այնուհետև վայելել իւր միակ դասեր Գիւղիկարի հարսանիքը:

Բայազէթի ոչ մի բնակիչ չունէր այնքան մեծ և լուս գոմէշներ ինչպէս Գալուստեանցը և Գիւղիկարի պատրաստված դայախ և պանիրը միշտ առաջարկվում էր հիւրերին: Գալուստեանցը, թանձր և սպիտակ էր, ինչպէս ինքն Գիւղիկարը:

Միայն Գալուստեանցը կարող էր լծել արօրի մէջ 7 լուծ ուժով և առողջ եզներ և գոմէշներ: Նա միայն ունէր այնպէս գեղեցիկ և երկու յարկանի առն, երկու սենեականոց օրտեղ կարելի էր ընդունել մեծ պատով մինչև անգամ Մուստաբ-փաշային: Նրա բոլոր պատուհանների մէջ ապակիներ էին գցած և մի քանիսին միայն իւղոտ

Տրագրականխօսութեան բացի վերջ յիշված նեղ, կախարդված շրջանակից՝ ապարդիւն քարոզ մայրենի լեզուի առանց ընդունակութիւն ունենալու կենդանի լեզու ստեղծելու, և ուսումնարանի մասին վայրիվերոյ քարոզ, որպէս ամենաբարձր կէտ ազգի զարգացման,—այն էլ եկեղեցական ուսումնարան....

Թատրոնը մինչև 1872 աւելի առաջադէմ էր քան թէ լրագրութիւնը: Մինչդեռ լրագրութիւնը չը կարողացաւ հասնել անձնաքննական սկզբունքին, թատրոնը մասամբ շոշափեց կրիտիկական աչքով մեր հասարակութեան պակասութիւնները՝ աղքատի հարստահարութիւնը հարուստի ձեռքով, ընտանեկան ճնշումը և այլն....

Բայց թատրոնն էլ հասնելով զարգացման մի յայտնի կէտին, անշարժ մնաց: Ինչպէս լրագրութիւնը մինչև 1872 թիւր, այնպէս էլ թատրոնը մտաւ մի տեսակ նեղ, անկանխելի, կախարդված շրջանակը: Կրիտիկական հայեացքը մեր հասարակական արդեան կեանքի վրա վերջին խօսք էր, որ ասեց մեզ թատրոնը. այնուհետև նա անկարող եղաւ աւելի հեռու գնալ, անկարող եղաւ ներկայացնել նոր սերունդին հնացած գաղափարների տեղ նոր ի գէտալ ներ....

Թղթեր կայքած: Ներքին յարկի սենեակը վառարան ունէր և ներկած էր գոյնգոյն ներկերով: Նա ձմեռ ժամանակ թանգոզին հիւրերին ընդունելու համար էր:

Պարսից թանկագին խալիչաներով ծածկված էին սենեակների յատակները և մեծ թաւեայ բարձակաշինները հրաբուրմէին ծանապարհից յոգնած հիւրերին հանգստանալու, բայց հիւրասէր տանտէրը խնդրում էր սպասել աղու հաց ուտելու և երկար ժամանակ չէր սպասել տողի հիւրերին: Գիւղիկարի մի և փափուկ ձեռները շատուում էին պատրաստել ամենայն բան ինչ որ կարելի էր յոգնած հիւրի համար և մէկ քանի ժամանակից յետոյ ներկայանում էր նա, արձակ մազերով հիւսած 20 կամ 30 փոքր հիւսներով, որոնք ուրովում էին օձի նման և քար էին ընկնում շատ ցածր Բայազէթի գեղեցիկում մէջքի վրա: Եփովված և կարմրատակած գեղեցիկներն ողջունում էր հիւրերին և ծունկ չըթելով գոյում էր խալիչ վրա սպիտակ քանդեայ սփռոցը և դարում էր նրա վրա արծաթեայ անոթների մէջ փրօլ խոտոված ճուտեր, ձուտներ, պանիր և դայախ, շիշերով գինի և յետոյ հեռանում էր:

Շատ ոչխարներ ունէր Գալուստեանցը, մինչև 1,000 գլուխ, որոնք արածում էին իրա սենեական դաշտերում: Ապրելով իր գեղեցիկների աղջկայ հետ նա իրան բարդաւոր էր համարում:

Ինչպէս որ մեր մեռնող լրագրութիւնը 1872 թիւն հարկաւորութիւն ունէր մի վերանորոգիչ ոյժի, այնպէս էլ այժմ թատրոնը, պատելով իր միակերպ, նեղ, սահմանափակ, կախարդված շրջանակի մէջ, պահանջ ունի մի նոր, վերանորոգիչ ոյժի, մի յեղափոխական զօրութեան:

Ինչպէս որ լրագրութիւնը մինչև 1872 թիւր կատարեալ անշարժութեան էր հասել և մեռնելու վրա էր թէ իր բովանդակութեան և թէ իր կազմակերպութեան կողմից, այնպէս էլ թատրոնը թէ իր ընկերային և թէ իր բեմական գործողների կողմից այժմ կարծես քարայր է, հասել է անշարժութեան:

Ինչպէս լրագրութեանը հարկաւոր էր վերանորոգիչ ոյժ թէ բովանդակութեան և թէ կազմակերպութեան կողմից, այնպէս էլ մեր թատրոնին այժմ հարկաւոր է մի յեղափոխական ոյժ նրա ընկերային և բեմի վրա գործող անձների կողմից: Կողմից, այնպէս էլ մեր թատրոնին այժմ հարկաւոր է մի յեղափոխական ոյժ նրա ընկերային և բեմի վրա գործող անձների կողմից: Կողմից, այնպէս էլ մեր թատրոնին այժմ հարկաւոր է մի յեղափոխական ոյժ նրա ընկերային և բեմի վրա գործող անձների կողմից:

Հներով չը կարողացանք հիմնել նոր լրագրութիւն, դժուար թէ հներով կը կարողանանք հիմնել նոր թատրոն:

Գ. Ա.

* Թարգմանած «Кавказъ» լրագրի №№ 171, 173 և 174 մէջ տպված պ. Կվարտանոսի յօդուածից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

6 նոյեմբերի

Ըստ դիպաց Նոր-Նախիջևանի հարկարմեա- կին, որ լինելու է գալ տարի, ես շատ դրել եմ առաւել շատ խօսել եմ, և եթէ հարկը պահանջէ, պատրաստ եմ հարկը անգամ աւելի խօսելու, գրելու, համոզելու, ապացուցանելու, որ պ. պ. նախիջևանցիք այդ պատահմունքը, ինչպէս որ պէտք է, գնահատեն, նրանից օգուտ քաղին. և նրա սկզբնապատճառները յիշատակը արժանաւոր կերպով անմահացնեն, և տեղացի հայ ժողովրդի երախտագիտութիւնը օրէ օր շատացնեն:

Պ. պ. նախիջևանցիք. մի քանիսը ձեր ձայնաւորներէն խորհուրդ կուտան արձան (մօնումէնթ) կանգնեցնել ձեր քաղաքի մէջ: Այս առաջարկութիւն անողները նշանաւոր մարդիկ են, այդ ես գիտեմ. նրանց լեզուն ճարտար է, նըրանց փաստերը (sic) շատ է. բայց ես և հետո մի քանի աննշան մարդիկ ձեզ կաննք, որ պարզելով կարծիքը այդ պատուելի պարոններուն, ամենին պատրաստութիւն չունենք համաձայնելու նրանց հետ:

Հաւատացած եղէք, որ եթէ ձեր շինելու արձանը շատ հազարներ չարժենայ (30,000—60,000) ինչպէս քաղաքի դարդարանք չէ կարող ծառայել. քառասուն մարմարոնէ պիտի քանդակուի տաք, պատուարանը պորփրի քարէ, բայց այդ շատ թանկ կը նստի. թուճէ պիտի ձուլել տաք, դռանիցն պատուարանով, այդ ես արժան չի նստի ձեզ. իսկ չուզունէ... սով խայտապարծեանս... խնդրեմ այդ մասին մինչև անգամ մի խօսիք, վասն զի բոստոլցին, թայրանցին, քիրմանցին, մինչև անգամ Բաթմայքի գեղացիները անվերջ ժամանակուս պիտի ծիծաղին մեր վրա: Իսկ իսկ իսկ իսկ, փառայել Նկատարինէ Ներկորը, հիւսիսային Շամիրամ և չուզունէ արձան... 6, 8, 10 էր Աստուծոյ, միւս անգամ բերաններէս այդպիսի խօսք չը ձաննք:

Պարոններ, արեցէք մէկըմէկու հասկանալը: Դուք գիտէք Ռուսաստանը ինչ նպատակու հրաւիրեց և հիւրասիրեց մեզ հայերուս: Մեր հարուստ լինելու համար: Այ՛—Մեր քաջ և պատերազմասէր լինելու, համար: Այ՛—Մեր գիտուն և ուսումնասիր լինելու համար: Այ՛—Առուտուրի մէջ մեր հմուտ լինելու համար: Մասամբ այդ ևս ոչ—Ռուսաստանի թագաւորները և նրանց մէջ առանձնապէս Նկատարինէ Ներկորը նրա համար հայերուս հիւրասիրեցին, որ մենք մեր գիտած արուեստները *) ծաղիկեցնենք և ծաւալենք մեզ չըջապատող վայրենի և կիսավայրենի ժողովրդի

*) Նկատելի բան է, որ սրանից 25—30 տարի առաջ Նախիջևանի մէջ ծաղկած էին գրեթէ ամեն տեսակ արուեստները, որոնք մեծ գումար դրէին ներս կը բերէին: Այդ արուեստները դարու ընթացքին և պահանջքին յարմար առաջ չեղանով, այլ մնալով նախապատկան վիճակի մէջ, Մոսկովի և այլ քաղաքաց հետ մրցել չը կարողացան և... մեռան:

արժանի երիտասարդ: Նա այդպէս կարծում էր նրա համար, որ երբ Աղաջանը նստում էր էր գեղեցիկ նստող վրա, գեղեցիկ Գիւլիզարը մշտ դուր էր թուշու և բռնում էր նրա սպանդանը: Գայուստեանը լաւ իմանում էր որ Աղաջանը ևս պատրաստ է իր գուրդը դնել Գիւլիզարի համար: Գայուստեանը այդ բանը լաւ իմանում էր և ոչ մի նշան չէր ցոյց տալի որ նա ցանկանում էր նրանց ամուսնութիւնը: Նա մըտածում էր, թող սիրեն, որովհետև արժանի են միմեանց և միտ կարող են ամուսնանալ, թող անցնեն այս մտաւոր պատերազմի լուրերը և զարնանք են կը վճարեն բոլոր պարանքս և երբ կը վերադառնան Նրանից, այն ժամանակ կուրախացնեն իմ սիրելի աղջկան ամուսնացնելով Աղաջանի հետ: Այսպէս էր մտածում Գայուստեանը և նրա սիրտը ոչինչ տարաբաղդութեանը չէր սպասում:

Այդ միջոցին շուտ շուտ սկսեց գալ ու գնալ Գայուստեանցի տուն քրտորներ մէկ գիւղի ցեղապետ Մըսու-Ռասու-Օղլի անունով: Նա բնութեւն էր Գայուստեանի մօտ ծախելու մէկ կամ երկու հատ կշնաքի կաշի, նա սովորաբար առուտուր էր անում Գայուստեանից հետ և վերջը տալիս էր կաշին չնչին գնով, չը հետացնելով մի և նոյն ժամանակ գեղեցիկ Գիւլիզարից էր աչքը:

մէջ. որովհետև նրանք շատ լաւ կը ճանաչէին արուեստի հզօր նշանակութիւնը որպիսի և իցէ թէրուծեան մէջ: Եթէ Նկատարինէ կայսրուհին յատկապէս առուտուրի գնահատող և խրախուսող լինէր, այն ժամանակ նա առաւել շուտ հըրէաներուն կը հրաւիրէր, որք, ինչպէս գիտէք, այդ բանումը հայերէս շատ ստոր չին:

Ես դարձեալ կանամ պատուեցէք Նկատարինէ Ներկորին, հիմնելով նրա յիշատակին արուեստական դպրոց, որն այս օրվայ օրս մեզ այնքան հարկաւոր է, որքան հացը, ջուրը, օդը:

Ի հարկէ, դուք կարող էք արհամարհել իմ կարծիքը, իմ հրաւերը, իմ յորհուրդը, իմ խնդրը և կատարել ուրիշ մարդոց խորհուրդ. բայց իմացած եղէք, որ շուտ կը փոշմանէք. որովհետև Նախիջևանը, որ այժմ այս թշուառ վիճակին հասել է *), քանի մի տարիէն առաւել կը վատթարանայ և այնուհետև ոչինչով չենք օգնի: Չը մտածանք Լեհաստանի քառասուն հազար ազգի համար կորած գերդաստանը, որոնք մեր նախիջևանցոցն հարազատ եղաքք էին: Ըստ Անի քաղաքին: Եղբայր նախիջևանցիներ մեր 25,000 ժողովրդին պէտք է ապահով հաց. այժմվայ առուտուրը իր տակը ամուր հող չունի. մեզ ոչ միայն դժուար, այլ և անհնարին է առ այժմս մրցելու հրէաների և յոյների հետ:

Ինքն ըստ ինքեան կը հասկացուի, որ արուեստ, արուեստ անելով, ես չեմ կամենում քարոզել և համոզել, որ բոլոր նախիջևանցիք արուեստագործներ դառնան. Աստուծո՞ մի արտացէ: Բայց ես շատ կը կամենայի, որ այն թշուառ սախանիներու, արագածիներու, տուեակիներու, ընդամենեւ, ժամին դուռը տապալտով մուրացկաններու, ժամկոչներու, պաղարի մէջ քաշ եկող մաթապաղներու, ամպարներու մէջ ծառայող քուլաքներու, և այլն, և այլն, և այլն որդիք մի օր հուշակարգ դերձակներ, կոչկարներ, հիւսներ, երկաթագործներ, քարակոփներ, զինագործներ, սովորիչներ, գոհարագործներ, և այլն լինէին: որ մեզած քաղաքին կենդանութիւն տալին և աղքատացած Նախիջևանի մէջ դրսէն փող ներս բերէին: Անն ինչ է իմ ցանկութիւնը, անն ինչ ես օր ու գիշեր կաղաղակեմ և իմ աղաղակը ձայն հարբաւոր յանապատի կը մնայ. ինչու. անոր համար որ քաղաքս մէջը թօսմազադաները օրէ օր աւելնալու վրա են:

Պարոն Նախիջևանցիներ ես կառաջարկեմ ձեզ—յանուն Նկատարինէ կայսերուն շինել (կամ եղածը դարձնել, անուանափոխել) ա զ Ղ Ը կ ա ն ց ա ռ ու ե ս տ ա կ ա ն վ ա թ ա տ ու ը ն, իսկ յանուն Գովգի կաթողիկոսին—ա դ ա յ օ ց ա ռ ու ե ս տ ա կ ա ն վ ա թ ա տ ու ը ն, իսկ եթէ, քաղաքի բերանը ձեռքերը ընկնի աւելորդ 2-3 հազար մանէթ, այն ժամանակ կարող ենք Լուստուրի «գեղեցիկ վանդակագատի» մէջը, արևմտեան սանդուղի մը և ձախ կողմերը, սա-

*) Նկատելի բան. Նախիջևանի մէջ այնպիսի թաղեր (մա հ լ ա) կան, որ միայն 2—3 օրինաւոր տուն ունին, մնացածը կամ բաց-ազգայր, կամ քանդված, կամ կիսաքանդ և կամ տան կողմերը աւերած մի մի բոխի կողմերը նախիջևանցի կասէ ձին ի տուն եր են. Երեւանից մէջը բնակիչները նրախիջևան և բարոյական որպիսութիւնը: Այս ամենի միակ պատճառն է ժողովուրդի մէջ արուեստ չը լինելը:

Ինքն Մըսուս համարեա Գայուստեանցից շատ հարուստ էր իր հօտերով և արդէն երկու հատ առողջ և գեղեցիկ կանայք ունէր, բայց նրա բոլոր սիրտը կը պած էր միմիայն Գիւլիզարին և պատրաստ էր բոլորը դնել այդ օրիորդի համար: Արդէն նա իր մտքումը դրել էր փախչելու օրիորդին և նրա համար շատ գզուշութեամբ նկատում էր Գայուստեանցի տան մուտքը և ելքը, որոնք շատ ամուր էին: Աղաջանը ունէր նոր ձեռի հրացան, որի գնտակը միշտ նպատակին էր հանում, իսկ Մըսուս միայն ապրանքակներ, արձանապատ և ծուռը քուրդի սուր, որի մի հարուստով կարում էր եղան գրուելը և շատ գեղեցիկ սեղան, որի կողք ծովային զամիլից էր չինած:

Մաստիկ սիրահարված էր Մըսուս Գիւլիզարի վրա և մի և նոյն ժամանակ սաստիկ ատում էր Աղաջանին, որ նրա հետ միայնակ չէր թողնում Գիւլիզարին Աղաջանը հասկանում էր այս բանը և մի քանի անգամ զաղտնի գզուշացրեց, որ նա դադարի կեղտոտ կաշիք բերուց, եթէ ոչ կը զոհվի իր հրացանին: «Տեսնենք» ասում էր Մըսուս զարթացած:

Ինչպէս Գայուստեանցը յոյս ունէր, որ այս պատերազմի լուրերը չեն արդարանայ, այնպէս էլ Մըսուս իր յոյսը դնում էր այս խօսքի վրա «տեսնենք»: Մըսուս այնքան էր ցանկանում

զարթալիտ ծառերու մէջ, կանգնեցնել մի մի կողմող (ՕՃԵԼԵԿԵՆ) թափծու երկաթէ, բոլորովին նման այն արձանին, որ կայ վեհադեպ Լազարեանց ճեմարանի պարտիզի մէջ, որով անշուշտ, և ձեր նպատակին հասած կը լինէր, և ժողովուրդը վրա ձանր և ապարդին բեռն դրած չէր լինի, և վերջապէս խելքով և իմաստութեամբ պատուած կը լինէր յիշատակները մեր երկու բարերարներուն—Նկատարինէ Ներկորին և Գովգի Արղուսեան կաթողիկոսին: Չեղ սով կարգել այդ երկու կողմողներու վրայ (որ քառանկունի պիտի լինէր) մեր քաղաքի հիմնարկութեան երկտող պատմութիւնը չարձանագրելու և վերջ յիշած բարերարներուս մարմարոնայ քանդակած պատկերները մէկալմունքի մէջ չի դնելու:

Նախիջևանի հարկարմեալը տօնելու մասին «իմ կարծիքս և համոզմունքս այս է»

Ես ամենախոնարհաբար կը խնդրեի պ. քաղաքագլխին, Սահակ Մանուկեան Արձաւարեանին, երբ որ միւս անգամ խնդրի ձեզ այդ մասին, դու՛մայ մէջ կարդալ նուստախ այս առաջարկութիւնը զոչ կայ առաջարկութեանց հետ:

Սիրելի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. դօկտօր Աւետիք Բաբայան, որ բընակում է Թիֆլիսի Սուխու Սուխու Սուխու փողոցի վրա, տուն № 14, խնդրում է մեզ յայտնել որ նոյեմբեր ամսի 16-ից սկսած նա ընդունելու է ներքին և Ղալախի (ներվախի) մասի հիւանդութիւնների տկարներին իր բնակարանի մէջ ամսն օր. բայց չորեքշաբթի և կիրակի օրերից, առաւօտեան ժամը 9-ից մինչև 11, իսկ երեկոյեան 4 1/2 մինչև 6 ժամ:

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան փոխ-նախագահ Գ. Ի. Կիպիանի, հրաւիրում է ընկերութեան պ. պ. անդամներին չնորհ բերել ընկերութեան ընդհանուր ժողովի հերթական նիստին, որ լինելու է քաղաքային դուռայի շինութեան մէջ նոյեմբերի 20-ին, երեկոյեան 7 ժամին, ընկերութեան համար նախագահ ընտրելու և ընթացող գործերը քննելու համար: Նիստին ներկայ գտնվել կարող են ամեն անձինք, որոնք հետաքրքրվում են կենդանիների հովանաւորութեան գործով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՆՐՄԱՆԻՍ

Կերմանական կայսրի կոմսուհի Բիւսմարկին ընծայած հարանիքի նուէրը մի ազգայնան է, որի արարական քանդակագործի միջոց նկարված է Մարիամ անուշը: Իսկ նրա փխայացուի պարզեւած նուէրը մի շքեղ մենայեռ անդամանք է:

պատերազմը, որքան որ ցանկանում էր Գիւլիզարին տիրապետել: Պատերազմի միջոցով կարծում էր ձեռք գցել օրիորդին, ոչնչացնել Աղաջանին և Գայուստեանցին և սեփականացնել նրանց հարստութիւնը:

Մտածանք ապրել ամիսը և պատերազմի լուրերը սկսեցին ակելի տարածվել ամենայն տեղ: Շատ անգամ Աղաջանը աղաւթում էր իր հօրը, որ նա իր ընտանիքով և թանգաղին կարամիքով հեռանայ Երևան և նորան թողնի տանը կաշքերուն նայելու: Մաստիկ ցանում էր նրա սիրտը Գիւլիզարի համար և սաստիկ վրդովում էր Գայուստեանցի խօսքերից, որ չէր հաւատում պատերազմի լուրերին և ասում էր. «Ինչ կայ, կը գան ուսաները, կընդունենք. նրանց և կը հիւրասիրենք, նոքա քրիստոնեայք են, մեզ չեն նեղացնի, իսկ թիւրքերի մէջ չը կայ մի մարդ, որ չը պատուէ իմ տունը և չը լինի ինձ պարտական զոհն մի բանով. մենք վախենալու բան չունենք. Աղաջան, ոչ մէկը և ոչ միւսը չեն դիպչի մեզ և շուտով կը սկսենք աւելի ուրախ ապրելու»—Իսկ քրիւղերին մտածում են, հայր, որոնք ոչնչացրին իմ բոլոր ընտանիքը, ասում էր Աղաջանը:

—Գիւլիզար, միթէ նոքա կը համարձակվեն իրանց կեղտոտ ատրճանակներով դուրս գալ մեր հրացանների և ուսուսաց զօրքի առաջ: Ինչք

Կայսրը այս երկու ընծաներին կցեց և երկու իրան սեփական ձեռքով գրած նամակներ, որոնց մէջ նա ամենաբարեկամական ցանկութիւններ է մաղթում Բիւսմարկի իշխանական ընտանիքի բաղաւորութեան համար:

Բերլինի լրագիրները յայտնում են որ նուրբուս կայանաւորվեցան հինգ ուսաներ, որոնք շարունակ յարաբերութիւններ ունենին իրանց հայրենիքի սօցիալական շարժիչների (agitateur) հետ: այդ հինգ բանտարկաններից երեքը բժիշկներ են, չորրորդը աստուածաբան է, իսկ հինգերորդը բաղաւորութեան ճեմարանի ուսանող է:

ԱՌՍՐԻՍ

Այն չտիպաւանց ծախսերը, որոնցով ուստրուսուսարկան միապետութիւնը դեռ երկար ժամանակ պէտք է զբաղվէր, այսինքն Բոսնիայի և Հերցեգովինայի գրաւելու ծախսերը, որոնց կանոնաւորելու մասին ժողովրդի կողմից իրաւացի տրտուսջներ էին լսվում, այդ ծախսերը երեկ շուտով կը ծածկվեն մի Ֆինանսական ժողովի հոգաւորութեամբ, որին կը նախագահէ Բօշաչիչ: Արքունական բոլոր կալուածները պէտք է ապահովվեն: Բայց այս հարցի մասին, ասում է «Correspondance de Pesth», դեռ վիճարկութիւններ չեն սկսի մինչև որ քաղաքական գլխաւոր հարցերի մասին լինելու կարգադրութիւնները վերջացած չը լինեն:

Կոնս Եւրպայով այսօր, նոյեմբերի 11-ին, գնաց Բուդա-Պէշտ, ուր նա կը մնայ երեք օր:

«Polit. Corresp.» լրագիրը հրատարակում է հետեւեալ յայտարարութեան բնագիւղը, որ Բոսնիայի և Հերցեգովինայի համար մի ընդհանուր թողութիւն է հրատարակում:

Թողութիւնը (amistie) տարածվում է բոլոր նրանց վրա, որոնք թէպէտ և սկզբում ընդդիմադրում էին գրաւելուն, սակայն յետոյ հաշտվել են այն մտքի հետ, որ թոյլ տան խաղաղութեամբ գրաւել երկիրը, և յետոյ նրանք են ստանում այդ թողութիւնը, որոնք տան և չորս օրվայ ընթացքում կը յայտնեն իշխանութեանը իրանց հպատակութիւնը:

Թողութիւնը նոյնպէս ստանում են նրանք, որոնք բանտարկված են և կամ որոնք արդէն մի անգամ ենթարկված են եղել պատժի: Բայց այն բանտարկեալները, որոնք առաջնորդի գերեր են եղացել, նրանք մնում են առանց ներքուրթեան:

Բայց և այնպէս այս վերջինների մասին էլ մի խնդրեք կառաջարկվի, որպէս զի դու-

ես խօսում որդի, ասում էր Գայուստեանցը: —Ոչ, հայր, ասում են որ քրտորներ շատ գէնք ունեն, նրանց ցեղապետները ժողովում են և խորհուրդ են անում հրաւիրել նրանց պատերազմը, ասում էր Աղաջանը:

—Թող ժողովին. ես իմ տեղից չեմ հեռանայ, կը գան ուսաները, և քրտորներ իրանց անօրէն զուրկ կը խոնարհացնեն նրանց առաջը և մենք կապրենք ինչպէս այժմ և աւելի ուրախ... Շատ մի մտածիր, Աղաջան, այլ ցանկացիր որ, Մոսկովայի թագաւորը ուղարկի իւր զօրքը և իր բարեկարգութիւնները և օրհնի մեզ իւր բարի ձեռքով նոր կանցով քրիստոնեաների հետ ապրելու:

Աղաջանը թէպէտ և ուղում էր հաւատալ Գայուստեանցի խօսքերին, բայց նրա սիրտը մի բան զգում էր: Նա սկսեց մաքրել իւր հրացանը, պատրաստել գնտակներ և ժողովել վառօդ: Նա անդադար մտածումընքնելով նայում էր Գուլիզարի վրա, որ տեսնելով թէ իր սիրելին մի ծանր հոգս ունի, նրան աւելի և աւելի սկսեց պաշտել:

(Կը շարունակվի)

նէ նրանց միջի շատ թէ քիչ թեթեւ յան-
ցաւորներին, որոնք արժանի են զթուփեան,
աղաւան:

ԹԻՒՌԻՒՄ

Բանիստում գտնվող աւստրիական դրա-
ւող բանակի առողջութիւնը ամենացաւելի
զրուփեան մէջ է:

Հէնց միայն Սէրաէլօի հիւանդանոցնե-
րում 1,000-ից աւելի հիւանդներ կան, հիւ-
անդանոցի մեծ մասը մրսերուց, թ քաւտու-
թիւնից կամ ջերմից են հիւանդանում: Տի-
ֆը, որ ամենասատիկ չէ, այնու ամենայ-
նիւ մինչև այժմ այդ ցաւով վարակվել
են 104 զինուորներ:

Իսկ ինչ կը վերաբերի բանիական ապա-
տամբութեան հուշակաւոր պարագլուխ Հա-
ջի-Լոյաին, նրա առողջութեան զրուփիւնն
էլ շատ նախանձեղ չէ: Եթէ նա չը համա-
ձայնի, որ իր սոր կարեն, արեան փոռութիւնը
անշուշտ կը տարածվի բոլոր մարմնի մէջ:

Ձը նայելով վէրքի սաստիկ կսկիծին, ա-
սում է «Neue freie Presse» լրագրի սեփա-
կան թղթակիցը, (որ շաբաթ օրը նրան այ-
ցելութեան էր գնացել) նա զուարթ է և ախոր-
ժելով է խօսում:

Միզատ փաշան Ասորեստանի կառավա-
րիչ է նշանակված:

Մինիստրների խորհուրդը քննեց յունական
հարցը:

Ռուսները շարունակում են գալ Բուրգաս:
Խորհուրդը վիճեց յունական պատմական
պահանջներով, որ պատգամաւորներ նշանակ-
վին սահմանները որոշելու մասին: Հաւատաց-
նում են որ սահմանները կանոնաւորելու
մասին մի խաղաղ վճիռ են ներկայացրել
Սուլթանին:

ՖՐԱՆՍԻԱ

Աշխարհահանգէսի փակվելու կիրակի օրը
նշանաւոր եղան մի քանի հասարակական
ժողովներ:

Աշխարհահանգէսի մշակների խումբը Եստօ
ք' 0 թատրոնում մի մեծ խնջոյք տուեց:
Խնջոյքը կայացաւ Վիկտոր Հիւգօի պատուա-
ւոր նախագահութեան և պ. Լուի Բլանի
նախագահութեան ներքոյ: Պ. Պէլլըտան
նախագահում էր Հէրսօնի դահլիճում ընկե-
րութեան տարեկան նիստում, որի նպատակն
է մատակարարել մշակ դասակարգին տար-
րական ուսումն: Վերջապէս պ. Ժիւլ Սիմօն,
ընդապառնալով բարեփոխում սենատորներով
և Սէն նահանգի մի քանի պատգամաւորնե-
րով, նախագահում էր Տրօպալէրօի մեծ
դահլիճում վաճառականութեան մէջ գտնված
տեկնիները և օրիորդների ժողովին:

Այս ժողովը շատ նշանաւոր է. նա մինչև
ինչը հարիւր ընկերակիցներ ունի և մի նշա-
նաւոր քանակութեամբ էլ պատուաւոր ան-
դամներ, այդ պատուաւոր անդամները թուումը
գտնվում են բոլոր մինիստրները, գրէթէ
ամբողջ սենատն կէտը, Ֆրանսիական թատ-
րօնի արտիստներն մեծ մասը և շատ էլ գիտ-
նական անձինք: Ժողովի միջոցները, որի սկս-
ուելը շատ ժամանակ չէ, արդէն հասնում են
53,000 Ֆրանկի, և նայելով դրա պատուա-
ւոր անդամների թւի օր ըստ օրէ աճելուն,
յոյս կայ որ ընկերութեան միջոցներն էլ
հետզհետեւ աւելի ու աւելի կընդարձակվին:

Ձը նայելով բոլոր այն լուրերին, որոնք հա-
ղորդում էին պ. դը Սէն-Վալլէի հիւանդու-
թեան մասին, ընդհակառակը հաստատ տե-
ղեկութիւն կայ որ նրա առողջութիւնը շատ
լաւ դրութեան մէջ է:

Պ. Դէկազ դուքըը հրատարակել է տուել
թէ նա մերժել է ցնահ սենատորութիւնը.
բանն այս է որ Պ. Դէկազ դուքըը առաջի

անդամ բոլոր երեք քուէարկութիւններից
յետոյ էլ չը կարողանալով ընտրվել չաչ-
խատեց մի երկրորդ անգամ էլ փորձ փորձել:

Հաւատացնում են որ աշխարհականների
մանիֆէստը վաղը դուրս կը գայ, և որ դրանք
ամբողջապէս կը գումարվին, որպէս զի վճառ-
կան կերպով ընդունեն պ. պ. Գ' Զօսովիլի, Օս-
կար դը Վալլէի և Բարանիօնի կանդիդատու-
թիւնը սենատորների մշակական աթոռների
համար: Պատճառ են որ հանրապետական մե-
ծամասնութիւնը, ոչինչ խտուրթիւն չէ կամե-
նում գործադրել մայիսի 16-ի մարտոյ դէմ, և
որ շուտով օրակարգի կանցնի այն խնդիրը, որով
այսուհետեւ երկիրը ժողովրդական կուսակ-
ցութիւնների համաձայնութեամբ կապահո-
վուի աշխարհականների յեղափոխական ձգ-
տումները դէմ, և որ հանրապետականները
կը բաւականանան նրանով միայն որ մայիսի
16-ի մարտոց վարձուքը կը մասնին ժող-
վրդական կարծիքի անաշուտ դատաստանին:
«Independance Belge» ասում է որ երկր-
տական փոխառութիւնը մի հասարակ ֆե-
նանսական գործողութիւն չէ. սա զբաւա-
կան է ներպայի խաղաղութեան և Ֆրան-
սիայի Անգլիայի հետ դաշնակցութեան:

ՀԱՅԹԻ

Հայթից գրում են Փարիզի լրագրնե-
րին հետեւեալ տխուր լուրը, որ բաւակա-
նին ուշացել է մի զարհուրելի ուրազանի
պատճառով, որ փրթել է վերջին ամսում այս
կղզու մի բաւականին մեծ տարածութեան
վրա:

Վերջապէս ստացած լուրերը սրտապատառ
նկարագրութիւններ են ամում այդ ուրազա-
նից պատճառած վնասների մասին:

Հարաւային թերակղզու վրա գտնված
բոլոր հիւանդանոցները և հարաւային քաղաքնե-
րը նշանաւոր վնասներ են կրել Աղէաների
ուպաւորութեան տակ Պորտօպրէնս քաղաքի
պատկառելի արքեպիսկոպոս այսպէս է խօ-
սում. «Տէր Աստուած, ինչքան աղէտներ մի
և նոյն ժամանակ»

Սեկղեցիները խորտակված են, անիրը և
ընկնելները հեղեղած, հունձը փչացած,
ամեն աւերակ ու թշուառութիւն է: Մի
քանի նամակներ էլ հարցրում են. Պերա-
կղզու երկու փերի բոլոր մեծ ու փոքր
քաղաքները կործանված են հեղեղով. ամեն
տեղ ծանապարհները փչացած, երթեկեկու-
թիւնը դարձած ու կենդանիներն էլ փչացած
են: Բազմաթիւ մարդիկ զոհ են գնացել:

Վառավարութիւնները և երկու խորհր-
դարանները, որ այս րօպէիս իրանց վերջին
նստումն էին, վճռեցին օգնութիւն խնդրել
տառապաւալ ժողովրդի համար. կաթօլիկ հո-
գեորականութիւնն էլ մի և նոյն նպատակով
ստորագրութիւններ բացեց:

ԱՆՊԱԻՍ

Բոլոր լրագրիներում սպված է լորդ Բի-
կօնսֆիլդի ճառը, որ նա ասել է նորերում
Լոնդօնի լորդերի (քաղաքագլուխի) ճաշի
ժամանակ: Ճառի մէջ Անգլիայի առաջին մի-
նիստը երկար խօսում է քաղաքական ներ-
կայ դրութեան վրա, յայտնում է իր կար-
ծիքը արեւելեան խնդրի վրա, ցոյց տալով թէ
ինչ է արել Անգլիան վերջին ժամանակները
այդ խնդրի վերաբերութեամբ և վերջաց-
նում է իր խօսքը Անգլիայի տպագրի վրա
էր կարծիքը յայտնելով:

Սա գիտեմ, կան մարդիկ, ասեց Դիզաւէլը,
որոնք կարծում են թէ Անգլիայի ոյժը նուազ-
վում է: Դեռ շատ ժամանակ չէ մեզ հաւա-
տացնում էին, որ մեզ սպառնում է նոյն
վեճակը, որին մի ժամանակ ենթարկվեցան
Հոլանդիան, Չինոյա և Վենեցիան: Բայց այս
պետութիւնների և Անգլիայի մէջ մեծ վա-
նագանութիւն կայ: Մենք մեր ծաղկման եր-

կար ժամանակամիջոցում կարողացանք կազ-
մակարգել, որպէս 34 միլիօն ժողովրդից
բաղկացած ազգութիւն, որի անդամները դեռ
երկար ժամանակ կը վայելին քաղաքական
բարորութեան, խաղաղութեան և արատու-
թեան բարիքները: Մեր ազգի պէս մի ազ-
գութիւն աւելի հակումն ունի հիմնել նոր
պետութիւններ, քան թէ զնջանել այն եր-
կիրները, որոնց վրա նա արդէն տիրապե-
տում է: Սա հաւատացած եմ որ եթէ ան-
զընացիները արժանի կը մնան իրանց նախ-
նիներին, Անգլիայի փառքը երբէք չի նսեմա-
նայա:

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԻՒՄՅԻՑ

Երբուրմ, 20 հոկտեմբերի:

Այս օր ունեցալ այցելութիւն Իսմայիլ—փա-
շայի և Մուսա կուրդուխովի հետ, որոնցից առա-
ջինը Հայաստանի վարչական կառավարիչն է,
իսկ երկրորդը զօրաց հրամանատարը: Երկուսի
համբաւն էլ շատ էր ըսած, վասնորոյ միատե-
սակ հետաքրքիր էի նրանց տեսնելուն: Իսմայիլ
փաշան յայտնի է մեր մէջ ինչպէս Տէր—Ղու-
կասովի ժամանակ, ևս ինչպէս ճարտարաբանստ
և քաջամարտիկ տաճկաց զինեալ, իսկ Մուսա
փաշայ կուրդուխովը իբրև ամենայայտնի մարդ
Տաճկաստան զաղթած լեւոնականներից. նա
ունէր զինեալ—մայրօրի աստիճան երբ անցաւ
սուլթանի ծառայութիւնը և կոչվեց լիվա փա-
շա. նա յայտնի է ևս իբրև սիրելի թշնամի կոմս
Լօրիս—Մէլիքովի, որին պատերազմի սկզբում
երգվել էր կամ կենդանի բռնել կամ սպանել,
բայց Աստուած այնպէս անօրինեց որ կոմսը ա-
ռաջի յաղթութիւնը ունեցաւ նորա վրա, որը
Բէզլի—Ամէդ հայաբնակ գիւղի մօտ ջարդ ու
փշուր լինելով, միանգամայն կորցրեց իւր նշա-
նակութիւնը պատերազմի բոլոր ընթացքում.
և նշանաւոր երկու շորա դէմ յայտնեց իր
քաջութեամբ նորա մօտիկ ազգական դրագունի
կապիտան կուսով: Այն սոցա հետ ինձ վիճակե-
ցաւ գործ ունենալ ոչ թէ ինչպէս սուրը ձեռին
բռնած հրամանատարների հետ, այլ Հայաստանի
կարգը պաշտպանողները և խաղաղութիւնը ապա-
նովողները: Մինչև անսովիլը ի հարկէ արդէն տե-
ղեկացած էի նոցա ընտանիքի ևս հարկէ ասով-
թիւնների վրա, որոնց համեմատ ինձ հարկաւոր
էր տեսակցութեան ժամանակ բաւականանալ
միայն հեռուից ձեռքը ձակատին տանելով
և փոխադարձ համբույր ուղարկելով: Բայց խոս-
տովանվում եմ անկեղծորէն որ թւալի ու ծանր
էի համարում տեսնել յաղթված տէրութեան
ներկայացուցիչներին հետ նոցա սովորութեամբ,
որ իմ աչքիս խոնարհացնող էր երևում, վասն
որոյ ներս մտածին պէս արագ և վտանգ ուղ-
ղեցի իմ քայլերը դէպի պարթեաննէր ձերուսի
Իսմայիլ—փաշան, որը իսկոյն վերկացած յառա-
ջացաւ մինչև սենեակի կէտը և ամօրջապէս
սեղմեց իմ ձեռքը երբ մեկնեցի նորան. հրա-
վիրելով մտնել իրան հետ, նա դարձեալ անկա-
տար չը թողեց իր սովորութիւնը, այլ համարի
ձեռով «բարեաւ տեսանք» ասեց, ակնարկելով
զինի շարժմամբ ներքը կանգնած արաբին սուրճ
բերել: Ես շտապեցի մատուցանել նորան լա-
զարեվի ողջոյնը և խորին յարգանքը. «Ո, ան-
չափ շնորհակալ եմ, ասեց նա, իմ մեծարգոյ
եղբորից, որին ես պատուում եմ բոլոր սրտից»:
Այդ պատիւը անշուշտ փոխադարձ է, պատասխա-
նեցի, երբ ուղեւ, գերազանց, այդչափ բարձր պա-
հեցիք պատերազմի դաշտում զինուորի և զօրապե-
տի փառքը»:
Անմիջապէս ստացալ շնորհակալու-
թեան համարը: «Մտի վշտով իմացալ իմ մեծ
եղբորս ընտանեկան անբաղուրթիւնը, շարու-
նակեց նա, և արդէն հեռագրով խնդրել եմ նո-
րանից վեհանձն թողութիւն որ չը կարողացալ
իր ժամանակին գնալ Ղարս ու զրկելով նորան
յայտնել իմ ցաւակցութիւնը»:
«Եվ վասն Դավիթովի
լազարեվը այնչափ յարգում է ամենի արժանա-
ւորութիւնը, ասեցի ես, որ նորա համար կրկնա-
պատիկ վեշտ կը լինէր եթէ մի այդչափ մեծ
տեղութիւն յանձն առէր նորա աղեկարգ անդ-
րանիկ եղբայրը»:
«Իմ սիրելի բէյ, չը գրտես որ-
չափ եմ սիրում ես լազարեվին, շարունակեց
մուսիլը, ես սիրում եմ նորան, որովհետեւ նա
այնչափ մեծամիտ է թշնամութեան ժամանակ,
որչափ այժմ խոնարհ և համեստ, մինչդեռ այդ-
պէս չեն շատերը ու շատերը ձեռք և մեր գե-
ներաւորներից»:
Այստեղ նա խօսը հաւաչեց դը-

րուրը բազմախորհուրդ շարժելով երևում էր
որ նա բաւական էր շատերից: «Ե՛հ, էլ ինչ լուր
կայ, հարցրեց նա, բաւական են արեւօք ձերոնք
ինձնից քանի որ վաղի եմ նշանակված
էրդրում, բաւական է արեւօք իմ եղբայր
լազարեվը»:
«Կուր ուղում էք ասել, մուսիլ,
թէ լազարեվը պարտաւորված է ձեզ թէ ոչ»:
«Ուստի Ֆուրլա (քաւ լիցի) կրկնեց երկու անգամ
մուսիլը, պարտաւորութեան տեղիք ամենին
չեմ տեսնում ես»:
«Այո, պարտաւորված, կրկնե-
ցի ես հաստատութեամբ, վասն զի պահելով
հայերին գաղթականութիւնից, լազարեվը կար-
ող էր մեծ մեղք վատարակել իր հողու վրա,
եթէ որ և իցէ չարիք հանդիպէին նոցա մու-
սուլմանները կողմից, իսկ որ ոչինչ չը պատա-
հեց, այլ ընդհակառակը բոլորը երախտագէտ են
լազարեվին, այդ միայն ձեռ շնորբից, մուսիլ,
որ կարողացաւ այդչափ զօրեղ կերպով զսպել
բոլորոված կրքերը և փակել ամենայն շարքը»:
Թող ընթերցողը կօպրիմնետ չը համարի
այս խօսքերը, որ յայտնեցի Երբուրմի վալիին,
վասն զի նորա խտուրթնից դէպի մասնե-
տականները և անկեղծ ցանկութենից պահպա-
նել հայերին, բաւական են բոլոր քրիստոնէայք,
բայց այս մասին ես կը խօսեմ միւս նամակիս
մէջ:

Յիշուելի, ես երջանիկ եմ որ Բուսիլիայի մէջ
պատահածը իմ վիշտիթումս չը պատահեց, ա-
սեց գալուստն փաշան (Իսմայիլ կուրդ): Այս
միջոցին ես խօսեցի Ալաշկերտոց վրա, ասելով
որ նոքա մեծ առաւապանքի ենթարկվեցին
զրկվելով հողից, տնից, տեղից:

«Իրանք են մեղաւոր, որդեակա, ասեց մուսիլը,
ինչն էլ չը հետեցին Երբուրմի օրինակին, ինչն է
նոքա ցան ու ցեր եղան անանց վերջը ու ա-
պագան մտածելու»:
«Այսպէս թէ այնպէս, գե-
րազանց, բայց արդէն կատարվել է թշուառ ի-
րողութիւնը, այժմ պէտք է մտածած միայն վըշ-
տին դարձանելու վրա»:
«Ինչպէս», հարցրեց նա:
«Ապահովել նոցա կայքը ու ունեցածը ուրիշ-
ների տիրապետութենից մինչև եկող գարունը,
երբ գուցէ նոքա վերադառնան իրանց տեղերը»:
«Այդ մասին ես արդէն գրել եմ Ղլմիսին ձեռ
կաթողիկոսին, ասեց նա, բացի այդ առաջար-
կել եմ ևս Ստամբուլ օր մի երկու տարով ազա-
տեն ալաշկերտոց բոլոր հարկերից և ցանելու
սերմ բաժանվել նոցա վերադարձած ժամանակը»:
Այս ասելով նա իսկոյն կանչեց քարտուղարին և
բերել տուաւ ուղարկած թղթի պատճէնը: Ես
շնորհակալութիւն արեցի նորա մարդասիրութենից
մնաց բարեաւ ասելով գնացի կուրդուխովի տե-
սութեան, որի մասին դարձեալ միւս անգամ:

Իսմայիլ-փաշան շատ տեսքով և դուրական
երեսով մարդ է, չը նայելով նորա 70 տարեկան
հասակին, նա խիտա արի է և գործունէայ: Երե-
սի գծագրութիւնը կանոնաւոր և է նորք, հա-
յեկացքը մեղմ և խնդրել: Նա խօսում է ոչ
հաստ և ոչ բարակ ձայնով: Երբ մտնեց ծանր
են և համեստ: Նա թէպէտ խիտա աղօթատէր է
և կրօնապաշտ, բայց մի և նոյն ժամանակը ար-
դարատէր է և մեծանոգի: Մէկ խօսքով նա շատ
նման է բարոյական և մասամբ ֆիզիքական յառ-
կութիւններով լազարեվին, որին իրաւամբ նա
համարում է իր եղբայր:

Գրիգոր Նիկողոսեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՑ

ԼԱՀՈՐ, 14/26 նոյեմբերի: Այլմէջիդի մէջ
գտած են բազմաթիւ հիւանդ և վիրաւորած
աֆգանացիներին: Հերոսնի զօրաբաժինը հա-
սաւ Լուրիխան, յետոյ Դանկաւ Աֆգանցիներ
ըր դարձակեցին այդ ամրոցը: Բնակիչները
պատասմբում են և սպառնում են զօրքերին
որոնք փախան, Լուր կայ, որ Չէլալարաղը
դարձակած է և նրա պահապան զօրքերը
փախուցում են դէպի Կարուլ:

ԼՕՆԳՕՆ, 14/26 նոյեմբերի: Լուր է տա-
րածված որ գնեւրալ Ուէրօ ուղևորվել է Լա-
հօր խորհրդակցելու համար Լիտտօնի հետ
Ռուսաստանի և Չինաստանի յարաբերութիւն-
ների մասին:

ԼՕՆԳՕՆ, 14/26 նոյեմբերի: Անցեալ գի-
շեր համբուրգեան փոստային շտեմարտ Պո-
մերանիա Ֆալկուստի մօտ դիպաւ մէկ ուրիշ
շտեմարտի և յատակը զնաց: 50 մարդիկ
խնդրվեցան:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ե Ն Ե Ր

ԳԵՂԱՐՎԱՅԻՆ ԿՆՆՆԻՄ

որ գտնվում էր Գոյալիսկի փողոցի վրա Սա-
րաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕԼՕ-
վի ԿՆՆՆԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ, ԵՌՈՅՎԻ ՏԱՆԵ,

Մամուլի տակից դուրս եկած
ՕՐԱՑՈՅՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ
1879 թ. համար.
Գինն է 15 կոպ. հարկերով զնոյններին
20% զեղուսն կը լինի: Օտարաքաղաքացիք
ձանապարհածախք վճարումեն հարկը օ-
րինակի համար — 1 ր ,,
յիսուսի համար — ,, 60 Կ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ
ՆՈՑՈՒՄ

1. Մինաս Զերազ-Աղայանի դաստիարակու-
թիւն 1 րուբլ, 2. Գրականական փորձեր 1
ր., 3. Նուսով կը ստացուի սոյն հեղինակի
աշխատութիւնը թէ ինչ շահեցանք Պէրլինի
Վեհագործին: 4. Գուլամիրեանց—Սենեքե-
րիմ ողբերգ. 1. ր., 5. Փորոս Լեւոնի 1. ր.,
6. Տէր Իսախանյանի դասագիրք ռուսե-
րէն լեզուի 40 Կ., 7. Կուկասեանց—ընթեր-
ցարան երրորդ տպագրութիւն 40 Կ.:

Նուսով լոյս կը տեսնէ պ. ՅԱՐՈՑԻ «Հա-
յոց Մամուլը Ռուսաստանում» և
Կովկասի մէջ «ՕՅՅՈՅԻ» ռուս լրագրում
տպուած յօդուածի հայկական բնագիրը ա-
ռանձին բրօշուկով:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը

- 1. Ն. Տէր-Աւետիսեան՝ Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ. 35
2. բ. տարի չորրորդ տիպ. 40
3. գ. և դ. տ. երկր. տիպ. 70
4. Ղ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ. 15
5. Տէր-Ստեփանեանի՝ Սկզբունք քրիստոնէական հասարակ. 50
6. Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. ա.
հինգերորդ տիպ. 40
7. Տէր-Իսախանյանց՝ РУССКОЕ СЛОВО 35
8. Արտիսեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ. 60
9. Հասարակ ընթերցումը ի մատենադրաց նախնային հանդերձ
ձանօթութեամբք Վիէննա Թոռնեան 4 —
10. Փորոս Լեւոնի պատմական վեպ ազգ. կեանքի 1 —
Այս օրերս կը ստանանք Վենետիկի Առձեռն բառարաններ, Հայաստանի քարտեզներ
և ընտիր մատենագիրներ աշխատութիւններից շատերը:

Մտնում է ՄԷԿ ՄԵԾ ԵՐԿԱԹԻ ԱՐԿՂ (կասա)
փողի համար Գնի համար կարելի է տեղեկա-
նալ Կաթողիկոսի եկեղեցու դիմաց Մեղք-
Նուբարովի տանը: 5—5

ՄԻ ՕՐԻՈՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

և պատրաստում է աշակերտութիւններին ԲՈ-
ԼՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ փոքր դասատուների
համար: Ընդունում է նոյնպէս ԳԻՇԵՐՈՒԿ
աշակերտներ և աշակերտութիւնը 8—9 տա-
րեկան: Հասցէն կարելի է եմանալ «ՄՇԱԿԻ»
խմբագրատանը:

ОСОБА РЕПЕТИРУЕТЬ

и подготавливает во ВСЪ учебныя заве-
дения въ младше КЛАССЫ, а также
принимаетъ ПАНСИОНЕРОКЪ или ПАН-
СИОНЕРОВЪ отъ 8—9 лѣтъ. Адресъ
можно узнать въ редакціи „МШАКЪ“

ՕՐԱՑՈՅՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ 1879
թ. համար ԵՐԵՒԱՆՈՒՄ կարելի է գնել
Արսէն Միլիք-Քելեֆերեանցից: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՄԻՔԵՐՈՎ
ԼԵՆՆ ԵՐԿԱԹՈՂՈՒ ՈՒՍՈՒՄ-
ՆԱՐԱՆԻ ՀՈՎԱԿԱՆՈՒՄ

յայտնում է, որ նոյեմբերի 10-ից մինչև 20-ը առաւօտեան
10—2 ժամը ուսումնարանի շինութեան մէջ
(Կուկիայում, Վարձնոցովկայայ նախերեքնայայ
փողոցի վրա) մտնող աշակերտները կենթար-
կվեն ՓՈՂՈՑԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԵԱՆԵԼ: Այս տարի
բացվում է միայն ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ դասատու:
Ուսումնարանը ընդունում են բոլոր դասա-
կարգերի ռուս ՀՊԱՏԱԿ ԵՐԵՒԱՆԵՐ: Պատրաս-
տական դասատուն մտնելու համար պահանջ-
ջվում է 11-ից մինչև 17 տարեկան հասակ,
իսկ գիտութիւն կրօնից, գլխավոր ա-
ղօթքն էր ռուսաց լեզուից, ազատ ըն-
թերցանութիւն և գրութիւն,
Թուրքարանութիւնից. դորձողութիւններ
ամբողջ թւերով
ԳԻՇԵՐՈՒԿՆԵՐԻՆ ռուսումնարանը առժա-
մանակ չէ ընդունում:
Աշակերտների տարեկան թոճակ նշանակ-
ված է տարեկան 10 րուբլ: Ուսումնարան մտն-
ներու համար խնդրքները պետք է հասա-
րակ թղթի վրա գրված լինեն և տրվին Վե-
ՐԱԿԱՑՈՒՄ, որ բնակվում է ուսումնարանի
շինութեան մէջ: Խնդրքի հետ պետք է ներ-
կայացնել մե ա ը ի կ ա կ ա ն վկայական:
Կարձ ժամանակամիջոցում աշակերտներին
միջոց կը տրվի էժան գնով ուսումնարանի
մէջ ձԱՅԵԼ:

Ս Ե Ն Ե Ք Ե Ր Ի Մ

ԹԱԳԱՌՈՐ ՀԱՅՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
Ո Ղ Ե Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ը Ն Ծ արարուածով:
Գինն է 1 րուբ. արժ:
Մեր այս աշխատութիւնը լոյս տեսաւ և ար-
դէն կաճաւում է
Ս. Պետերբուրգում Արժ. Գէորգ Գառ. Խան-
թարեանցի մօտ:
(գրադա-
Տիֆլիսում պ. Զաքարիայ Գրիգորեանի ճառա-
Շուշում պ. Մանտիկ Եսայեանցի նոյնն-
իակ երանում մեր մօտ:
Նուսով դուրս կը գայ 1879 թ. մեր ՕՐԱՑՈՅՑ-
ները 2 տեսակ. մեծադիր հանդերձ 1 պատկե-
րով և ՄԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ Գ. տարի յաւելուա-
ծով և փոքրադիր հանդերձ 2 նոր պատկերնե-
րով:
Եւս մօտ միջոցում կը հրատարակենք մի տես-
րակ ԲՆՆՈՒԹԵԱՐԲ ՊԱՏԱՍԻԱՆ և ՀԵՐ-
ՔՈՒՄՆ «Գրիչ» ստորագրութեան դէմ (փորձի)
№ III-ի մէջ: Երևան նոյեմբերի 1878 թ.:
Արգար Գուլամիրեանց

ԳՐԻԳՈՐ ՆԵՍԻՆԵԱՆԻ
ՊԵՏՐՍԵՎՍԻ ԸՆԿՈՒՍՏԵՆԵ-
ՐԻ ԽԵՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ
ՆԵՆՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակութեամբ ՅՐԱԿԻ ԵՒ
ՏՐԻԳՈՒ ՍԻՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որտեղական
ԱՌԱՌՈՏԵԱՆ ԺՕԳԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱՂՏՈՆԵՐ և
ՎԱՐՏԻԿՆԵՐ, երկայոց հազուստներ, ՎԵ-
ՐԱԲԿՈՒ—ՍԱՂԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ըն-
դունվում են ՊԱՏՈՒՐՆԵՐ զնուորական և
քաղաքական հազուստների համար: Յոյս ու-
նեմ, որ ինչպէս պատուիրողներ նոյնպէս է
զնոյնները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ: 8—75

ՄԻ ԵՐԻՏԵԱՆՐԻ ցանկանում
է ԳՐԱՆԱԽԵՐԿՆ ԵՐԵՒԱՆԻ
ՊԵՏՐՍԵՎՍԻ ԸՆԿՈՒՍՏԵՆԵ-
ՐԻ ԽԵՆՈՒԹՈՒՄ

տալ: Ցանկացողները կարող են
դիմել ուղղակի «Մշակի» խմբա-
գրատուն:

ՆՈՑՈՒՄԵՐԻ 17. 8 Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց ԹԻՖԼԻՍ, 1878.

Table with multiple columns containing names, amounts, and dates. Includes sections for 'ՔՈՒՄՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ', 'ՔՈՍՏ', 'ԲԺՇԿԱՆՈՑ', and 'ՄՇԱԿԻ ՊԱՏԱՍԻԱՆԵՐ'.